ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«23»«Նոյեմբերի»2020թ № 50

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՆԵԼ ԱՂՎԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2020 թվականի Սեպտեմբերի 26 – ին ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչ՝ Գնել Աղվանի Մանուկյանը իր ներկայացուցչի՝ փաստաբան Արթուր Հարությունյանի միջոցով վարչական բողոք է ներկայացրել, որով Արևաշող համայնքի ղեկավարին խնդրել է կայացնել բարենպաստ վարչական ակտ և Գնել Աղվանի Մանուկյանի ընտանիքին ընդգրկել Արևաշող համայնքի 15.12.2008թ – ի աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում:
Ուսումնասիրելով վարչական բողոքը և վարչական վարույթում առկա փաստաթղթերը՝ գտնում եմ որ, վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Փաստ է, որ Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչ Գնել Աղվանի Մանուկյանը 2005թ – ի հուլիսի 22 -ին դիմել է Լոռու մարզի Արևաշող համայնքի նախկին ղեկավար Ֆելիքս Ափուջանյանին խնդրելով իր ընտանիքը ընդգրկել աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ծրագրում: Հիմք ընդունելով Գնել Աղվանի Մանուկյանի 2005 թվականի հուլիսի 22 – ի դիմումը համայնքի նախկին ղեկավար Ֆելիքս Ափուջանյանը վերջինիս ընտանիքը ընդգրկել է ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի N 432 որոշմամբ սահմանված կարգով իր կողմից կազմված «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած Լոռու մարզի Արևաշող համայնքի ընտանիքների» հերթացուցակում (195 համարի ներքո):
2. Փաստ է, որ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը 2007 թվականին իր նախընտրական քարոզարշավի ընթացքում տված խոստումներից մեկը կյանքի կոչելու համար 2008թ - ին հանձնարարել է ՀՀ կառավարությանը կազմել 1988թ – ի դեկտեմբերի 7 – ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակիչների վերջնական հերթացուցակ: ՀՀ Կառավարությունը այդ նպատակով 2008թ – ին նոյեմբերի 13 – ին «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետեվանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» 1337-Ն որոշմամբ սահմանել է 1988թ - ի դեկտեմբերի 7 – ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետական աջակցության հաշվին բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների շրջանակը, այդ քաղաքացիներին հերթացուցակում ընդգրկելու կարգը, դրա համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը:
3. Փաստ է, որ ոչ ոք Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչ Գնել Աղվանի Մանուկյանի ընտանիքը ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի N 432 որոշմամբ սահմանված կարգով կազմված «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած Լոռու մարզի Արևաշող համայնքի ընտանիքների» հերթացուցակից հանելու որոշում չի կայացրել, և այդ ցուցակից նրանց ոչ ոք չի հանել:
4. Փաստ է, որ ՀՀ կառավարության 2008թ - ին նոյեմբերի 13 - ի թիվ 1337-Ն որոշմամբ սահմանված կարգով 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետական աջակցության հաշվին բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների նոր հերթացուցակ կազմելու համար ՀՀ

կառավարությամբ սահմանվել է նոր չափանիշներ, ուստի քաղաքացիներին նոր կարգով սահմանված հերթացուցակում հաշվառելու և հին ցուցակում ընդգրկված քաղաքացիների վերահաշվառելու համար պահանջվում էին նոր փաստաթղթեր:

5. Փաստ է, որ ՀՀ կառավարության 2008թ – ին նոյեմբերի 13 – ի թիվ 1337-Ն որոշմամբ սահմանված կարգով 1988թ–ի դեկտեմբերի 7 - ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետական աջակցության հաշվին բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների նոր հերթացուցակ կազմելու, և այդ ցուցակը մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15 – ը ՀՀ քաղաքաշինության նախարարություն ներկայացնելու նպատակով, նախկինում համայնքի ղեկավարին դիմած համայնքի բնակիչների դիմումները, դրանց կից ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրելու, ըստ անհրաժեշտության նոր կարգին համապատասխան 1988թ – ի դեկտեմբերի 7 - ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետական աջակցության հաշվին բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչներին նոր հերթացուցակում վերահաշվառելու, բնակարանային գործերը պահանջվող փաստաթղթերով համալրելու նպատակով բնակարանային գործերի վերանայման ընթացքում համայնքի բնակիչ Գնել Աղվանի Մանուկյանի բնակարանային գործերը ուսումնասիրելիս պարզվել է, որ Գնել Աղվանի Մանուկյանի բնակարանային գործում պակասում է 1988թ – ի դեկտեմբերի 7-ի դրությամբ վերջինիս ընտանիքի կազմի և 1988թ–ի դեկտեմբերի 7 – ի դրությամբ համայնքում բնակելի տուն ունենալու փաստը հաստատող արխիվային տեղեկանքը, կամ սահմանված կարգով նախատեսված 1988թ–ի դեկտեմբերի 7–ի դրությամբ բնակելի տուն ունենալու փաստը հիմնավորող որևէ այլ փաստաթուղթ, ինչպես նաև վերջինիս սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի պետական գրանցման վկայականի լուսապատճենը:

6. Փաստ է, որ Գնել Աղվանի Մանուկյանի կողմից ՀՀ կառավարության 2008թ–ին նոյեմբերի 13 – ի թիվ 1337-Ն որոշմամբ սահմանված կարգի 6–րդ մասի 3 – րդ կետով սահմանված փաստաթուղթը՝ այն է մեջբերում եմ (*3. 1988 թվականի դեկտեմբերի 7 -ի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև տուն ունենալու մասին քաղվածք՝ համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին տուն ունենալու փաստը.*) ՀՀ Ազգային արխիվի Սպիտակի տարածքային ներկայացչության կողմից 2011թ - ի հոկտեմբերի 25 - ին տրված թիվ 202 արխիվային տեղեկանքը համայնքի բնակիչ Գնել Աղվանի Մանուկյանը, համայնքապետարան է ներկայացրել այն ստանալու օրը այսինքն 2011 թվականի հոկտեմբերի 25 - ին, ընդ որում ներկայացված արխիվային տեղեկանքում, որևէ նշում չկա Գնել Աղվանի Մանուկյանի 1988 թվականի դեկտեմբերի 7 – ի դրությամբ ունեցած և երկրաշարժի հետևանքով կորցրած բնակելի տան մասին:

7. Փաստ է, որ ըստ ՀՀ կառավարության 2008թ - ին նոյեմբերի 13 – ի թիվ 1337-Ն որոշմամբ սահմանված կարգի 22–րդ կետի համաձայն մեջբերում եմ (22. բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը: 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո դիմումներ չեն ընդունվում, և այդ ժամկետում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով՝ սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունների կատարումը համարվում է դադարեցված:) ուստի և նշված ժամկետում սահմանված փաստաթղթերը ամբողջությամբ չներկայացնելու հետևանքով Գնել Աղվանի Մանուկյանի ընտանիքը չի վերահաշվառվել 1988թ–ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետական աջակցության հաշվին բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող Արևաշող համայնքի բնակիչների նոր հերթացուցակում:

8. Փաստ է, որ Գնել Աղվանի Մանուկյանի 2008 թվականի դեկտեմբերի 12–ին 1988թ–ի դեկտեմբերի 7 – ի դրությամբ առանձին տնտեսություն լինելու, բնակելի տուն ունենալու և

այն երկրաշարժի հետևանքով կորցնելու փաստը հաստատելու քաղաքացիական հայցով դիմել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան: ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԼԴ4/0075/02/09 քաղաքացիական գործով դատաքննության արդյունքում 2009 թվականի հունիսի 11–ին հայցը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ մերժել է Գնել Աղվանի Մանուկյանի հայցը:

9. Փաստ է, որ Գնել Աղվանի Մանուկյանը ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ4/0075/02/09 քաղաքացիական գործով կայացված վճիռը չի բողոքարկել և այն ուժի մեջ է մտել 2009 թվականի հուլիսի 13-ին ուստի

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76 – րդ հոդվածի 1 – ին կետի բ) կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բողոք բերող Գնել Աղվանի Մանուկյանի գործով բարենպաստ վարչական ակտ կայացնելու և իր ընտանիքը Արևաշող համայնքի 15.12.2008թ – ի աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում ընդգրկելու վերաբերյալ վարչական բողոքը մերժել ամբողջությամբ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում այն ստանալու պահից և կարող է բողոքարկվել վարչական կարգով որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում կամ դատական կարգով որոշումն ուժի մեջ մտելու պահից երկամսյա ժամկետում:

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ